ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 13.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/28

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի 21.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 30.01.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

««Մեղրու ՏԲԿ» ՓԲԸ-ն 2018 թ. հունվարի 25-ի թիվ 1 որոշմամբ՝ «Քիմիական /լաբորատոր/ նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցման մասին, որի հրավերի թիվ 3, 8, 9, 16, 42, 48 և 54-րդ չափաբաժիններում պահանջվող ապրանքները հանդիսանում են ախտահանիչ միջոցներ, որոնցից թիվ 3, 8, 9, 42 և 54-րդ չափաբաժիններում գրված են կոնկրետ բրենդային անվանումներ, ներառելով նաև «կամ համարժեք» բառերը:

«Խաչպար» ՍՊԸ-ն մասնակցել է այդ հարցմանը թիվ 3, 8, 9, 16, 42, 48 և 54 չափաբաժինների մասերով, որտեղ թիվ 3, 8, 9, 42 և 54 չափաբաժիններում առաջարկել է համարժեք ապրանքներ՝ այլ անվանումներով:

01.02.2018թ. «Խաչպար» ՍՊԸ-ն ստացել է հրավերի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը, համաձայն որի «Խաչպար» ՍՊԸ-ն 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել հրավերի թիվ 3, 8, 16, 42, 48 և 54 չափաբաժինների մասերով:

02.02.2018թ. «Խաչպար» ՍՊԸ-ն ստացել է ծանուցում՝ ներկայացնելու անհրաժեշտ փաստաթղթերը, ինչը և կատարել է:

09.02.2018թ. «Խաչպար» ՍՊԸ-ն ստացել է գրություն՝ թիվ 3, 8, 9, 42, և 54 չափաբաժինների մասերով պարզաբանումներ ներկայացնելու պահանջով, ինչը վերջինիս կողմից կատարել է:

03.02.2018թ. «Խաչպար» ՍՊԸ-ն ստացել է հրավերի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրությունը, որի 1.2 կետի համաձայն՝ թիվ 8-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվել «Խաչպար» ՍՊԸ-ն՝ որպես ավելի ցածր գին առաջարկած մասնակից, թիվ 1.3 կետի համաձայն՝ թիվ 42-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվել «Արմենֆարմ» ՍՊԸ-ն՝ որպես ավելի ցածր գին առաջարկած մասնակից, թիվ 1.4 կետի համաձայն՝ թիվ 54 չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվել «Խաչպար» ՍՊԸ-ն՝ որպես ավելի ցածր գին առաջարկած մասնակից:

Նույն արձանագրության թիվ 1.5 կետով որոշվել է հրավերի թիվ 9, 42 չափաբաժիններով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Արմենֆարմ» ՍՊԸ-ին:

19.02.2018թ. «Խաչպար» ՍՊԸ-ն ստացել է գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրությունը, որի թիվ 1.2 կետի համաձայն՝ թիվ 8-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվել «Արմենֆարմ» ՍՊԸ-ն, թիվ 1.3 կետի համաձայն՝ թիվ 42-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվել «Արմենֆարմ» ՍՊԸ-ն, թիվ 1.4 կետի համաձայն՝ թիվ 54 չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվել «Արմենֆարմ» ՍՊԸ-ն: Նույն արձանագրության թիվ 1.5 կետով որոշվել է հրավերի թիվ 9, 8. 42, 54 չափաբաժիններով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Արմենֆարմ» ՍՊԸ-ին:

«Խաչպար» ՍՊԸ-ն համաձայն չէ «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 19.02.2018թ. թիվ 5 արձանագրությանթիվ 1.2, 1.3, 1.4 և 1.5 կետերով կայացրած որոշումների հետ՝ և ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է «Մեղրու ՏԲԿ» ՓԲԸ-ի «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրությամբ կայացրած որոշումները՝ 8, 42 և 54 չափաբաժինների մասով, և դիմելով ՀՀ Գնումների Բողոքարկման Խորհրդին՝ խնդրում է ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «գ»

ենթակետով՝ փոփոխելու «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 19.02.2017թ. թիվ 5 արձանագրության թիվ 1.2, 1.3, 1.4 և 1.5 կետերով կայացրած որոշումները՝ գնանշման 8-րդ, 42-րդ և 54-րդ չափաբաժինների մասով:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

ա) Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի 8-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ին մերժելը հակասում է հենց իրենց կողմից 13.02.2018թ. թիվ 4 արձանագրության թիվ 1.2 կետի որոշմանը, որտեղ նրանց համար հիմք էր հանդիսացել աշխատանքային լուծույթ ստանալու համար առաջարկվող նվազագույն արժեքը, որը ստացվում էր ինչպես տվյալ չափաբաժնի համար «Խաչպար» ՍՊԸ-ի առաջարկած գումարի չափից՝ 20000 դրամ, որը 7000 դրամով էժան է «Արմենֆարմ» ՍՊԸ-ի առաջարկած 27000 դրամ գումարից, այնպես էլ հրավերում առկա՝ 2 % պահանջի և առաջարկված ապրանքի 2.7 %- ի համեմատությունից:

Մերժման որոշումը կայացվել է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջների խախտումով:

բ) Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի 42-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու համար հիմք հանդիսացած հանգամանքի և կոնկրետ՝ 0,25 % և 0,1 % առկայության մասին հղումները ներառված չեն եղել հրավերի 42 –րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը սյունակում առկա պահանջներում, այսինքն՝ այդ պահանջների մասին ոչ մի մասնակից տեղյակ չի եղել, դրանք Պատվիրատուի մոտ ի հայտ են եկել միայն հայտերի գնահատման փուլում, ուստի այդ մերժման որոշումը կայացվել է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջների խախտումով: Լրացուցիչ տեղեկացնում եմ Ձեզ, որ հրավերի թիվ 42–րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը սյունակում առկա այդ ազդող նյութերի անվանումներին, նրանց տոկոսների կոնկրետ թվերին, ախտահանիչ նյութի pH-ի մեծությունը արտահայտող թվերին ներկայացված պահանջները վերաբերվում են ոչ թե թիվ 42–րդ չափաբաժնի «անվանումը և ապրանքային նշանը» սյունակում առկա «Սուլֆանիուսի խտանյութ» անվանումով «Անիոս» ֆիրմայի արտադրության ախտահանիչ միջոցին, այլ՝ թիվ 54 –րդ չափաբաժնի «անվանումը և ապրանքային նշանը» սյունակում առկա «Հեքսանյուսի խտանյութ» անվանումով «Անիոս» ֆիրմայի արտադրության ախտահանիչ միջոցին, որը ապացուցելու համար ներկայացնում ենք ՀՀ ԱՆ կողմից հաստատված՝ «Սուլֆանիոս» և «Հեքսանիոս Գ+Ռ» բրենդային անվանումներով ախտահանիչ միջոցների կիրառման մեթոդական հրահանգները:

գ) Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի թիվ 54–րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու համար հիմք հանդիսացած հանգամանքի և կոնկրետ՝ 0,5 % և 1-2 տոկոսների առկայության մասին հղումները ներառված չեն եղել հրավերի թիվ 54–րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը սյունակում առկա պահանջներում, այսինքն՝ այդ պահանջների մասին ոչ մի մասնակից տեղյակ չի եղել, դրանք Պատվիրատուի մոտ ի հայտ են եկել միայն հայտերի գնահատման փուլում, ուստի այդ մերժման որոշումը կայացվել է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջների խախտումով:»:

«Խաչպար» ՍՊԸ-ն 12.03.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ Բողոքի պահանջը լրացրել է հետևյալ բովանդակությամբ. «պարտավորեցնել «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին փոփոխելու 19.02.2017թ. թիվ 5 արձանագրության 1.2, 1.3, 1.4 և 1.5 կետերով կայացրած «Արմենֆարմ» ՍՊԸ-ին գնանշման 8-րդ, 42-րդ և 54-րդ չափաբաժինների մասով հաղթող ճանաչելու մասին որոշումները, և այդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից ճանաչել «Խաչպար» ՍՊԸ-ին»:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն Սմբատ Բալասանյանը:

2. <u>«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 26.02.2017թ. թիվ 62 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 21.02.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Ընթացակարգի 8-րդ չափաբաժնով հաղթող մասնակից է ճանաչվել «Արմենֆարմ» ՍՊԸ-ն, քանի որ նրա առաջարկը համապատասխանում է հրավերի պահանջներին, այն է «Ստերանիոս» նյութը պարունակում է 2% գլուտարալդեհիդ, իսկ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկված «Ստերոքս»-ը՝ 2,7% գլուտարալդեհիդ, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

42-րդ չափաբաժնով հաղթող մասնակից է ճանաչվել «Արմենֆարմ» ՍՊԸ-ն, քանի որ վերջինիս կողմից առաջարկվող «Սուրֆանիոս» խտանյութից ըստ հրավերի պահանջի՝ այն է պատվիրատուն կիրառում է լուծույթը ըստ մեթոդական հրահանգի՝ 0.5%-անոց, որը

ապահովում է բակտերիալ (այդ թվում նաև տուբերկուլյոզից), վիրուսային, կանդիդոզներից և դերմատոֆիտիայից վարակազերծումը մինչև 15 րոպեում, ստացվում է 0,5% 600 լիտր պատրաստի լուծույթ, որի 1 լիտրի արժեքը կազմում է 45 դրամ: Ավելին, ըստ մեթոդական ցուցումների «Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող «Սուրֆանիոս» խտանյութի միայն 0,25%-ով կարելի է կատարել բոլոր տեսակի ախտահանումները: «Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացրել է, որ իր կողմից առաջարկվող «Ամիքսան» խտանյութի 1 լիտրից ստացվում է 0.5%-անոց 200 լիտր աշխատանքային լուծույթ, ինչը բավարար չէ նորմալ ախտահանման համար, և չի բավարարում հրավերի այն պահանջին, որտեղ նշված է, որ պատվիրատուն կիրառում է լուծույթը ըստ մեթոդական հրահանգի՝ 0.5%-անոց, քանի որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող «Ամիքսան» խտանյութի միայն նվազագույնը 1% աշխատանքային լուծույթով է հնարավոր վերացնել վիրուսները, սնկերը, բակտերիաները և տուբերկուլոզի հարուցիչը (ներկայացնում եմ օգտագործման կարգը հիմնավորող փաստաթուղթը), այսինքն 3 լիտր խտանյութից ստացվում է 300 լիտր աշխատանքային լուծույթ, որի 1 լիտրի արժեքը կազմում է 84 դրամ: Այսպիսով, «Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված լուծույթը ավելի էժան է ստացվում, քան «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկվածը:

54-րդ չափաբաժնով հաղթող մասնակից է ճանաչվել «Արմենֆարմ» ՍՊԸ-ն, քանի որ վերջինիս կողմից առաջարկվող «Հեքսանիոս» խտանյութի 0,5%-ով հնարավոր է ախտահանել բակտերիաները, վիրուսները, սնկերը և տուբերկուլոզի հարուցիչը, իսկ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող «Մեգաբակ» նյութի 1-2% աշխատանքային լուծույթով է հնարավոր ախտահանել լաբորատոր անոթները և հատուկ հագուստները տուբերկուլոզի հարուցիչից: Այսինքն, «Արմենֆարմ» ՍՊԸ-ի առաջարկված խտանյութի 1 լիտրից ստացվում է 200 լիտր (1 լիտրի արժեքը կազմում է 22.5 դրամ) աշխատանքային նյութ, իսկ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող խտանյութի 1 լիտրից ախտահանելու համար ստացվում է 100 լիտր (1 լիտրի արժեքը կազմում է 84 դրամ) աշխատանքային լուծույթ:

Մենք առաջնորդվել ենք հրավերի պահանջներով և ավելի ցածր գին ունենալու սկզբունքով, իսկ տեխնիկական բնութագրերի համար մենք մասնակիցներին ներկայացրել ենք պարզաբանում, որ համարժեք ասելով նկատի ենք ունեցել տվյալ նյութի կիրառման եղանակը, այլ ոչ թե քիմիական բաղադրությունը: Այսինքն, միջոցը նախատեսված է ձեռքերի նախաօպերացիոն և հիգենիկ մշակման համար, կամ ախտահանիչ միջոցը կիրառում են տարբեր նյութերից բժշկական նշանակության արտադրանքի և բժշկական տեխնիկայի, այդ թվում վիրաբուժական, ատամնաբուժական գործիքների, կոշտ և ճկուն էնդոսկոպների և

դրանց գործիքների բարձր մակարդակի ախտահանման, մանրէազերծման համար կամ ախտահանիչ նյութը վերացնում է հետևյալ վիրուսները՝ հեպատիտ C,B, տուբերկուլյոզ և այլն»:

Պատվիրատուն հավելել է, որ փորձել է հնարավորինս օբյեկտիվ որոշում կայացնել և գործել է ելնելով «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շահերից, սակայն կընդունի Խորհրդի կողմից կայացված ցանկացած որոշումը»:

Պատվիրատուն պատշաճ կերպով ծանուցվել է Խորհրդում կայանալիք նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից որևէ ներկայացուցիչ չի մասնակցել նիստերին:

3. <u>«Արմենֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած դիրքորոշումը, փաստերը և հիմնավորումները.</u>

«Արմենֆարմ» ՍՊԸ-ն 27.02.2018թ. Խորհրդին ներկայացրել է միջնորդություն՝ Բողոքի քննությանը որպես երրորդ կողմ ներգրավվելու վերաբերյալ, որով հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արմենֆարմ» ՍՊԸ-ի շահերը կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, խնդրում ենք թույլ տալ «Արմենֆարմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներին ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում «ԳԲԽ-ԷՍ-2018/28» ծածկագրով բողոքի քննության նիստերին ներգրավվել որպես երրորդ կողմ»:

Վերը նշված միջնորդությունը Խորհրդի կողմից բավարարվել է:

Խորհրդում կայացած նիստերին մասնակցում էր «Արմենֆարմ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Արմեն Թանայանը:

4. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 30.01.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 01.02.2018թ. հայտերի բացման նիստի N 2, 08.02.2018թ. N 3, 13.02.2018թ.

N 4 արձանագրությունները, «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը, «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 26.02.2017թ. թիվ 62 գրությամբ հայտնած դիրքորոշումը.

«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական /լաբորատոր/ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև Ընթացակարգ): Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Խաչպար» և «Արմենֆարմ» ՍՊԸ-ները:

Ընթացակարգի թիվ 3, 8, 9, 16, 42, 48 և 54 չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 01.02.2018թ. հայտերի բացման նիստի N 2 արձանագրության 2-րդ կետով որոշել է «Խաչպար» ՍՊԸ-ն 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել Ընթացակարգի մի շարք չափաբաժինների, այդ թվում Բողոքի առարկա հանդիսացող՝ 8-րդ, 42-րդ, և 54-րդ չափաբաժինների մասով: (Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի համար «Խաչպար» ՍՊԸ-ն առաջարկել է 20,000 դրամ, իսկ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն՝ 27,000 դրամ ընդհանուր գին, 42-րդ չափաբաժնի համար «Խաչպար» ՍՊԸ-ն առաջարկել է 25,200 դրամ, իսկ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն՝ 27,000 դրամ ընդհանուր գին, իսկ 54-րդ չափաբաժնի համար «Խաչպար» ՍՊԸ-ն առաջարկել է 28,200 դրամ, իսկ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն՝ 38,400 դրամ ընդհանուր գին):

«ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝

- 8-րդ չափաբաժնով սահմանված՝ «Գլյուտարալդեհիդի 2% լուծույթ /Սալդեքս/ կամ համարժեք» գնման առարկան ունի հետյևյալ տեխնիկական բնութագիրը.

«Ախտահանիչ միջոցը կիրառում են տարբեր նյութերից բժշկական նշանակության արտադրանքի և բժշկական տեխնիկայի ,այդ թվում վիրաբուժական, ատամնաբուժական գործիքների, կոշտ և ճկուն էնդոսկոպների և դրանց գործիքների բարձր մակարդակի ախտահանման ր մարէազերծման համար, ախտահանիչ նյութը վերացնում է հետևյալ վիրուսները՝ հեպատիտ C, B, տուբերկուլյոզ և այլն: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար

առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք»;

• 42-րդ չափաբաժնով սահմանված՝ «Սուլֆանյուսի խտանյութ կամ համարժեք» գնման առարկան ունի հետյևյալ տեխնիկական բնութագիրը.

«Բաղադրակազմը՝ ազդող նյութը 9.75% դիդեցիլդի-մեթիլամոնիումի քլորիդ, 1% պոլիհեքսամեթիլեն (ՉԱՄ-4րդ սերնդի), գուանիդին, ինչպես նաև գործառնական բաղադրիչներ, կոռոզիայի ինհիբիտոր, և այլ հավելյալ նյութեր: Ախտահանիչ նյութի pH–ը 6,3 - 7,7: Թունավորության և անվտանգության ցուցանիշները. ստամոքս ընկնելիս և մաշկի վրա քսվելիս պատկանում է 4-րդ դասի քիչ վնասակար նյութերին, որովայն ներթափանցելիս՝ 5-րդ դասի գործնականորեն անվնաս նյութերին: Հակամիկրոբային ակտիվության սպեկտորը՝ ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամդրական և գրամբացասական մարէների, վիրուսների, կանդիդա և դերմատոֆիտոն ցեղի նկատմամբ: Կիրառման նպատակը՝ նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների ախտահանման և նախամանրէազերծումային մաքրման համար, երկուսը մեկում միաժամանկ: Պատվիրատուն կիրառում է լուծույթը ըստ մեթոդական հրահանգի՝ 0.5%-անոց, որը ապահովում է, բակտերիալ (այդ թվում նաև տուբերկուլյոզից), վիրուսային, կանդիդոզներից և դերմատոֆիտիայից վարակազերծումը մինչև 15 րոպեում: Պիտանելիության ժամկետը. Արտադրողի փակ տարայում՝ 3 տարի, աշխատանքային լուծույթինը՝ 14 օր: Պետք է ունենա ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, ISO 9001, ISO 14001, CE հավաստագիր»;

• 54-րդ չափաբաժնով սահմանված՝ «Հեքսանյուսի խտանյութ կամ համարժեք» գնման առարկան ունի հետյևյալ տեխնիկական բնութագիրը.

«Մակերեսների ախտահանում վիրուսային վարակներից, մանրէներից: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք»:

Հանձնաժողովը 08.02.2018թ. նիստի N 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ մասնակիցներից «Արմենֆարմ» ՍՊԸ-ն տվել է պարզաբանում, համաձայն որի 3, 8, 42, 54 չափաբաժինների համար «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկված նյութերի 1լ

աշխատանքային լուծույթի արժեքն ավելի թանկ է լինում, քան իր կողմից առաջարկված նյութերինը:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը՝ ուսումնասիրելով մասնակիցների կողմից տրված տեխնիկական բնութագրերը, որոշեց մեկ անգամ ևս հարցում կատարել «Խաչպար» և «Արմենֆարմ» ՍՊԸ-ներին՝ 3, 8, 42, 54 չափաբաժինների համար առաջարկվող նյութերի օգտագործվող ռեժիմների և վերջնական աշխատանքային լուծույթների պատրաստման կարգի վերաբերյալ:

09.02.2018թ. Հանձնաժողովը ներկայացրել է պարզաբանում, որով հայտնել է, որ տեխնիկական բնութագրում «համարժեք» նշումը կիրառելով՝ Հանձնաժողովը նկատի է ունեցել տվյալ նյութի նպատակային կիրառման եղանակը, այլ ոչ թե քիմիական բաղադրության համարժեքությունը:

«Խաչպար» ՍՊԸ-ն Հանձնաժողովին է նրկայացրել պարզաբանումներ իր կողմից առաջարկվող նյութերի օգտագործման կարգի վերաբերյալ՝ նշված նյութերի Հրավերի պահանջներին համապատասխանությունը հավաստելու նպատակով՝ հղումներ կատարելով նաև ՀՀ ԱՆ կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգներին:

Հանձնաժողովը 19.02.2018թ. նիստի N 5 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ մեկ անգամ ևս ուսումնասիրելով «Խաչպար» և «Արմենֆարմ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված նյութերի տեխնիկական բնութագրերը՝ որոշել է.

- 8-րդ չափաբաժնով հաղթող մասնակից ճանաչել «Արմենֆարմ» ՍՊԸ-ին, քանի որ նրա առաջարկը համապատասխանում է հրավերի պահանջներին, այն է «Ստերանիոս» նյութը պարունակում է 2% գլուտարալդեհիդ, իսկ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկված «Ստերոքս»-ը՝ 2,7% գլուտարալդեհիդ:

- 42-րդ չափաբաժնով հաղթող մասնակից է ճանաչել «Արմենֆարմ» ՍՊԸ-ին, քանի որ վերջինիս կողմից առաջարկվող «Սուրֆանիոս» խտանյութից ստացվում է 0,5% 1200 լիտր պատրաստի լուծույթ, որի 1 լիտրի արժեքը կազմում է 22,5 դրամ: 0,25%-ոց լուծույթը բավարար է բակտերիաների, վիրուսների, սնկերի, և տուբերկուլոզի հարուցիչի ախտահանումների համար, իսկ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող «Ամիքսան» խտանյութի միայն 1% աշխատանքային լուծույթով է հնարավոր վերացնել վիրուսները, սնկերը, բակտերիաները և տուբերկուլոզի հարուցիչը, այսինքն 3 լիտր խտանյութից ստացվում է 300 լիտր աշխատանքային լուծույթ, որի 1 լիտրի արժեքը կազմում է 84 դրամ:

- 54-րդ չափաբաժնով հաղթող մասնակից է ճանաչել «Արմենֆարմ» ՍՊԸ-ին, քանի որ վերջինիս կողմից առաջարկվող «Հեքսանիոս» խտանյութի 0,5%-ով հնարավոր է

ախտահանել բակտերիաները, վիրուսները, սնկերը և տուբերկուլոզի հարուցիչը, իսկ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող «Մեգաբակ» նյութի 1-2% աշխատանքային լուծույթով է հնարավոր ախտահանել լաբորատոր անոթները և հատուկ հագուստները տուբերկուլոզի հարուցիչից:

Նույն արձանագրության 1.5 կետով հանձնաժողովը որոշել է 8-րդ, 42-րդ և 54-րդ չափաբաժիններով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Արմենֆարմ» ՍՊԸ-ին:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում 27.02.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը պնդեց Բողոքն ամբողջությամբ և հավելեց, որ 8-րդ չափաբաժնով նախատեսված «Գլյուտարալդեհիդի 2% լուծույթ /Սայդեքս/ կամ համարժեք» գնման առարկային համապատասխանող «Սայդեքս» անվանումով ախտահանիչ միջոցը արտադրվում է Մեծ Բրիտանիայի «Ջոնսոն և Ջոնսոն Մեդիքալ» ընկերության կողմից, որի կիրառման մեթոդական հրահանգում՝ ազդող նյութ հանդիսացող գլուտարալդեհիդի պարունակությունը նշված է թույլատրելի ստորին և վերին սահմաններով՝ 2,2% -ից մինչև 2,7%-ը ներառյալ: Ընկերության տնօրենը նշեց, որ «Խաչպար» ՍՊԸ-ի առաջարկած «Ստերոքս» անվանումով նյութի մեջ գլուտարալդեհիդի պարունակությունը 2,7% է, ինչը ընդունեց նաև Բողոքի քննությանը որպես երրորդ կողմ ներգրավված «Արմենֆարմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը: Բողոքաբերը նշեց նաև, որ «Ստերոքս» անվանումով նյութը ակնհայտ համապատասխանում է «Սայդեքս» անվանումով պահանջվող նյութին, իսկ «Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից «Ստերիանոս» անվանումով նյութի մեջ գլուտարալդեհիդի պարունակությունը ընդամենը 2% է, ինչը նվազ է պահանջվող՝ «Սայդեքս» անվանումով նյութի՝ թույլատրելի ստորին սահմանից, այսինքն, չի համապատասխանում «Սայդեքս»-ի տեխնիկական հատկանիշներին: Ընկերության տնօրենը եզրակացրեց, որ «Խաչպար» ՍՊԸ-ին 8-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից չճանաչելու որոշումը անհիմն է և չի բխում գնումների մասին ՀՀ գործող օրենսդրության պահանջներից՝ առավելևս, որ «Խաչպար» ՍՊԸ-ի առաջարկած գինը 7000 ՀՀ դրամով նվազ է «Արմենֆարմ» ՍՊԸ-ի առաջարկած գնից: Ինչ վերաբերում է Ընթացակարգի 42-րդ և 54-րդ չափաբաժինների մասով Ընկերությանը հաղթող մասնակից չճանաչելու Հանձնաժողովի որոշմանը, ապա, ըստ բողոքաբերի, Հանձնաժողովի կողմից հրավերի 42-րդ և 54-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ին հաղթող մասնակից չճանաչելու համար հիմք հանդիսացած՝ ձեռքբերվող նյութից պատրաստվող աշխատանքային լուծույթների կոնկրետ տոկոսային ցուցանիշի վերաբերյալ որևէ հղում հրավերի 42–րդ և 54-րդ չափաբաժնի գնման առարկաների տեխնիկական բնութագրերը չեն պարունակել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը եղել է նվազագույնը, իսկ Ընկերության կողմից առաջարկված «Ստերոքս» անվանումով նյութի մեջ գլուտարալդեհիդի պարունակությունը (2,7%) համապատասխանել է Հրավերի տեխնիկական բնութագրում նշված «Սայդեքս» ախտահանիչ միջոցում նույն նյութի պարունակությանը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Ընթացկարգի 42-րդ և 54-րդ չափաբաժիններով «Արմենֆարմ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը պայմանավորված է եղել Հանձնաժողովի կողմից՝ ձեռքբերվող նյութերից ստացվող պատրաստի աշխատանքային լուծույթներում առկա նյութի տոկոսային պարունակության վերլուծությամբ և վերջինիս միավորի գնի հաշվարկով, որպիսի պայմանը նախապես Հրավերում առկա չի եղել:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 8-րդ, 42-րդ և 54-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչելով՝ գործել է ոչ իրավաչափ և խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» և «գ» ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 21.02.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը բավարարել:

2. Փոփոխել «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 19.02.2017թ. թիվ 5 արձանագրության թիվ 1.2, 1.3, 1.4 և 1.5 կետերով կայացրած որոշումները՝ գնանշման 8-րդ, 42-րդ և 54-րդ չափաբաժինների մասով:

3. Պարտավորեցնել «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնահատող հանձնաժողովին ընդունել՝ Ընթացակարգի 8-րդ, 42-րդ և 54-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**